րոց և քննութեանց մէջ մտնել [1] ։

Այս ամենն անյայտութեան մէջ կ՚թողու նոյնպէս մինչեւ ազգային պատմիչը՝ ուստի այս կարեւոր խնդրոց լուծումը ժամանակագիրներէ կ՚ստուգենք և կ՚ապաստանիմք. նոյն իսկ Սուրբ գրոց որ ամէն ժամանակագրութեանց աղբիւրը լինելով, նրանց մթութիւններին վրա լոյս կ՚տայ, վասն զի այն տեղ կ՚գտնեմք Նոյի կենաց ամքը. այն տեղ կ՚գտնեք նոյնպէս, որ իր կենդանութեան ժամանակ՝ հսկայքն կոչեցեալ աշխարհի՝ գնացին ՚ի Սենաար, և աշտարակաշինութենէն ետքը երբոր Հայկ դարձաւ Հայաստան՝ Նոյ տակաւին կենդանի էր. որով և յայտնի է, թէ Հայկ էր նա և աստուածապաշտ. և ոչ միայն Հայկայ միապետութեան ժամանակը կենդանի էր Նոյ, այլ և նորա միապետութենէն ետքը ևս 289 տարի ապրեցաւ նա ինքն Նոյ ճշմարիտ գաղափարն աստուածպաշտութեան, որով և անշուշտ Հայաստանն ևս եկաց մնաց յաստուածպաշտութեան մինչև գեղեցիկն Արայի ժամանակը ։

Շարունակելի.

[1] Հ. Միքայէլ Վ. Չամչեան, վերջին պատմագիր Հայոց.

Սուրբ Էջմիածնայ Սինոդական ժողովը տեսնելով որ հոգևոր և Ազգային Ուսումնարաններու մէջ կ՚ուսուցանեն զանազան անձինքներէ յօրինած քրիստոնէականներ և կրօնագիտութիւններ, վեհափառ կաթողիկոսի հրամանաւ կարգադրեց և բոլոր վիճակաւոր Առաջնորդաց տնօրէնութեանը յանձնեց, որպէս զի նախակրթարաններու և առաջին դասատուններու մէջ դասատուքը առնուն ի հրահանգութիւն Մսերեան Մսերեանց համառօտ քրիստոնէականը և նորա ընդարձակը միջին դասատուններու մէջ, իսկ վերջին դասատուններու համար փեշտըմալճեան Կ. պոլսեցի Գրիգոր պատուելոյ Լուսաշաւիղը և խալըպեան Ուսումնարանի տպարանէն 1862 ին հրատարակուած Օրբազեան պատմութիւնը.

## ԲԱՐՈՅԱԿԱՆ

### ՀԱՆԵԼՈՒԿ

Զաւակ ծնաւ յայն մեծ այգին,
ծառն երէց ծիծ ւեսպան զորդին·
Նոքա որպէս զգէս ունէին,
նանին ու նազան զայծու մորթին·

Կանաչ մի կայ ի մէջ դրախտին,
յորս գէտ անցնին հետ իր՝ սակին.
պտուղ ունի քաղցր ու լեղին,
ւէ նըմարիս երկու քնուքին.

Մայիս ամսոյ հանելուկն էր
Առաջինն՝ Աստուած եւ Ադամ.
Երկրորդը՝ Դրախտ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԱԻՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀՐԱՄԱՆԱՒ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.